Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր ակնարկ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրություններն անցկացվել են 2021 թվականի հունիսի 20-ին՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 104-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված ժամկետում:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունները կազմակերպվել և անցկացվել են 2016 թվականի մայիսի 25-ին ընդունված Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով և 2021 թվականի ապրիլի 1-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-171-Ն սահմանադրական օրենքով սահմանված՝ Ազգային ժողովի ընտրությունների կազմակերպման և անցկացման նոր կառուցակարգերի, արդյունքների ամփոփման և մանդատների բաշխման կարգի ու պայմանների համաձայն:

Ընտրական օրենսգրքում ամրագրված՝ ընտրական գործընթացի բոլոր փուլերի լիակատար թափանցիկությունն ու հանրային վերահսկողությունն ապահովելու նպատակով, ի թիվս այլ միջոցառումների.

ա) ընտրողների ցուցակներն ըստ ընտրական տեղամասերի ներբեռնման հնարավորությամբ հրապարակվել են համացանցում.

բ) քվեարկության ամբողջ ընթացքը և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը տեսանկարահանվել և հեռարձակվել է համացանցով՝ ուղիղ ժամանակային ռեժիմում.

գ) համացանցում ներբեռնման հնարավորությամբ հրապարակվել են ընտրողների ստորագրած.

դ) համացանցում հրապարկվել են քվեարկության բոլոր արդյունքներն ըստ ընտրական տեղամասերի.

ե) ընտրողների գրանցումն իրականացվել է տեխնիկական սարքավորումների կիրառմամբ, որոնք բացառում են կրկնաքվեարկության ցանկացած հնարավորություն:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքն ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների համար ապահովում է վերահսկողության հնարավորություններ և ըստ անհրաժեշտության՝ խախտված իրավունքների լիակատար պաշտպանության իրականացում:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածին և 104-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան քվեարկությունը կազմակերպելու և քվեարկության արդյունքներն ամփոփելու նպատակով հանրապետության տարածքում կազմավորվել է թվով 2008 ընտրական տեղամաս, որից 12-ը՝ քրեակատարողական հիմնարկներում (հիմք՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 104-րդ հոդվածի 5-րդ մասը, 17-րդ հոդվածի 4-րդ մասը և 18-րդ հոդվածի 1-ին մասը):

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 36-րդ հոդվածին և 44-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերին համապատասխան գործել է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, թվով 38 տարածքային ընտրական հանձնաժողովներ (10-ը՝ Երևան քաղաքում և 28-ը՝ հանրապետության մարզերում) և թվով 2008 տեղամասային ընտրական հանձնաժողովներ:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների ժամանակ ընտրությունների ողջ գործընթացը կազմակերպել և վերահսկել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով հավատարմագրվել և Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների կազմակերպման, անցկացման, արդյունքների ամփոփման ընթացքում դիտորդական առաքելություն են իրականացրել թվով 8 միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների՝ ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ (ԺՀՄԻԳ), Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով (ԵԽԽՎ), ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողով, ԱՊՀ դիտորդական առաքելություն, ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողով, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խորհրդարանական վեհաժողով (ՀԱՊԿ ԽՎ), Ռուսաստանի Դաշնության Հանրային պալատ, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպություն (ՖՄԿ), ընդհանուր թվով 483 միջազգային դիտորդներ, ինչպես նաև 19 տեղական հասարակական կազմակերպությունների՝ 8.749 դիտորդներ, տեղական 68 զանգվածային լրատվության միջոցի 745 ներկայացուցիչ և 50 օտարերկրյա զանգվածային լրատվության միջոցի 135 ներկայացուցիչ: Այցելուի կարգավիճակով տեղամասային ընտրական հանձնաժողովներ են այցելել և հետևել քվեարկության և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացին Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների և այլ պետությունների Կենտրոնական ընտրական հանձնաժողովների ընդհանուր թվով 70 ներկայացուցիչներ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերում ընդգրկված են եղել ընդհանուր թվով 16.063 քաղաքացիներ, իսկ թվով 4.139 քաղաքացիներ մասնագետի կարգավիճակով իրականացրել են ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումների աշխատանքի կազմակերպումը:

Ազգային ժողովի 2021թ. արտահերթ ընտրության էլեկտրոնային եղանակով արտերկրից իրականացվող քվեարկությունը կազմակերպվել է 2021 թվականի հունիսի 11-ից Երևանի ժամանակով 08:00-ից մինչև հունիսի 13-ը ժամը՝ 20:00-ն:

էլեկտրոնային եղանակով քվեարկելու իրավունք ունեցող 650 քաղաքացիներից էլեկտրոնային եղանակով քվեարկությանը մասնակցել է 500-ը:

Ազգային ժողովի արտահերթ ընտրության քվեարկության նախնական արդյունքները հրապարակվեցին 2021 թվականի հունիսի 21-ին, իսկ վերջնական արդյունքները Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակել է 2021 թվականի հունիսի 27-ին:

Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրության կազմակերպումն ու անցկացումը

ա) Նորմատիվ որոշումների ընդունում

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունները կազմակերպվել և անցկացվել են 2016 թվականի մայիսի 25-ին ընդունված Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով, ուստի բոլոր ենթաօրենսդրական ակտերն արդեն իսկ ընդունված էին: 01.04.2021թ. ընդունվեց «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-171-Ն սահմանադրական օրենքը, որի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերը ընդունվեցին հնարավորինս սեղմ ժամկետներում՝ ապահովելով նոր իրավակարգավորումների ամբողջական կիրարկումը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի բոլոր որոշումները զետեղվել են հանձնաժողովի պաշտոնական կայքում, իսկ դրանցով իրականացվող կանոնակարգումները հաշվի են առնվել ընտրական գործընթացի մասնակիցների համար ուղեցույցներ պատրաստելիս:

բ) Մասնագիտական դասընթացների կազմակերպում

Ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել ընտրական իրավունք ունեցող և ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայական ունեցող անձինք:

Հիմք ընդունելով նշյալ օրենսդրական պահանջը, համաձայն որի Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) և համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովները տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ կարող են նշանակել միայն որակավորման վկայական ունեցող քաղաքացիներին, ինչպես նաև Ընտրական օրենսգրքի 44-րդ հոդվածի պահանջն առ այն, որ տեղամասային ընտրական հանձնաժողովներում Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները)՝ նշանակում են երկուական անդամ,

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2021 թվականի մարտի 26-ից մինչև ապիլի 30-ը կազմակերպել և անցկացրել է ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ: Հաշվի առնելով Ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի կանոնակարգումը, համաձայն որի կուսակցությունների ներկայացրած ցուցակներում ընդգրկված անձինք կարող են մասնակցել ստուգարքին՝ անկախ դասընթացին մասնակցելու հանգամանքից, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2021 թվականի մայիսի 16-ին և մայիսի 22-ին նշված անձանց համար կազմակերպել և անցկացրել է ընտրությունների անցկացման մասնագիտական ստուգարք:

Դասընթացները կազմակերպվել և անցկացվել են Ընտրական օրենսգրքի պահանջների պահպանմամբ՝ հաշվի առնելով Կովիդ-19 համավարակի պայմաններում ընդունված սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները:

Նշված դասընթացներին մասնակցելու համար կուսակցությունների կողմից ներկայացվել էր 15260 հայտ, իսկ առանձին քաղաքացիների կողմից՝ 5628 հայտ, ընդհանուր թվով՝ 20888 հայտ: Կազմակերպված դասընթացներին մասնակցել են 15580 քաղաքացիներ, որոնցից 12722-ին ստուգարքի արդյունքում շնորհվել են որակավորման վկայականներ: Դասընթացի բոլոր մասնակիցները նախապես տեղեկացվել են դասընթացների կազմակերպման վայրի և ժամի մասին, այդ տեղեկությունները զետեղվել են նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Ստուգարքներն անցկացվել են գրավոր թեստերի միջոցով: Գրավոր թեստերի հարցաշարն իր ճիշտ պատասխաններով ևս զետեղված է եղել համացանցային կայքում: Դասընթացներն անցկացվել են Երևան քաղաքում և հանրապետության բոլոր քաղաքներում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմավորումից հետո իրականացվեց նաև նշված հանձնաժողովների անդամների ուսուցումը: Նշված ուսուցման կազմակերպման համար ժամանակահատվածը խիստ սահմանափակ էր, քանզի տեղամասային ընտրական հանձնաժողովներն արտահերթ ընտրությունների դեպքում կազմավորվում են քվեարկության օրվանից 18 օր առաջ: Կազմակերպված ուսուցման ընդհանուր տևողությունը կազմեց 12 օր, իսկ ուսուցմանը մասնակցեցին տեղամասային ընտրական հանձնաժողովների թվով 13.552 անդամներ, որոնցից 1859-ը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահներ, 1806-ը՝ հանձնաժողովի քարտուղարներ: Կազմակերպված դասընթացներին ապահովվել է 84,4 տոկոս մասնակցություն: Դասընթացի բոլոր մասնակիցներին տրամադրվել են տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի համար մշակված ուղեցույցներ:

գ) Տեխնիկական սարքավորումների կիրառումն ընտրական գործընթացում

Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների ժամանակ թվով 1996 տեղամասերում գործարկվեցին 4.007 տեխնիկական

սարքավորումներ (ընդհանուր թվով կազմավորված է եղել 2008 ընտրական տեղամաս, որից 12-ը՝ քրեակատարողական հիմնարկներում, որտեղ տեխնիկական սարքավորումներ չեն գործարկվում (ԸՕ 66-րդ հոդված, մաս 9)):

2021 թվականի մայիսի 18-ից սկսվեցին տեխնիկական սարքավորումների անհրաժեշտ քանակի ստուգման և կոմպլեկտավորման աշխատանքները: Ստուգվեցին շուրջ 4480 տեխնիկական սարքավորում, վերացվեցին առանձին տեխնիկական և ծրագրային թերությունները, ստուգվեցին 1750 անխափան սնուցման սարքավորումները և 1500 երթուղիչները:

Տարածքային ընտրական հանձնաժողովներին տրամարդրվել է նաև ընդհանուր առմամբ լրացուցիչ 300 տեխնիկական սարքավորում, անխափան սնուցման սարքավորումներ և երթուղիչներ՝ անհրաժեշտության դեպքում դրանց փոխարինումն ապահովելու համար:

2021 թվականի մայիսի 27-ից մինչև հունիսի 7-ը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ՄԱԶԾ «Հայաստանում ընտրական գործընթացների աջակցության ծրագրի» աջակցությամբ իրականացրեց ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումները սպասարկող մասնագետների և ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորումների սպասարկման և մասնագետների աջակցման կենտրոնի թվով 132 քաղաքացիների ուսուցումը: Երևան քաղաքում և հանրապետության մարզերում 12 օրվա ընթացքում կազմակերպվեց և անցկացվեց տեխնիկական սարքավորումները սպասարկող շուրջ 4.300 մասնագետների ուսուցում և ստուգարք: Դասընթացներին ներկա է գտնվել՝ 4068 մասնագետ, բավարար է գնահատվել՝ 4050 մասնագետ, անբավարար՝ 18 մասնագետ:

Ընտրական օրենսգրքի կանոնակարգումների համաձայն տեխնիկական սարքավորման ծրագրային ապահովումը Ազգային ժողովի ընտրությունների քվեարկությունից առնվազն 30 օր առաջ պետք է հասանելի լինի ընտրություններին մասնակցող կուսակցությունների ներկայացուցիչներին՝ տեխնիկական վերստուգում իրականացնելու համար և ընտրողների էլեկտրոնային ցուցակի նախապատրաստումը տեխնիկական սարքավորման մեջ տեղադրելու համար ենթակա է վերահսկման Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների ներկայացուցիչների կողմից: Նշված գործընթացի վերահսկողությունը կազմակերպվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով, որի համաձայն ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա վերջինիս տրամադրվում է տեխնիկական սարքավորումների ծրագրային ապահովման վերստուգման համապատասխան կոդ: Հարկ է նկատել, որ ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կողմից նման դիմում չի ստացվել:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տարածել էր նաև հայտարարություն էլեկտրոնային եղանակով կազմված ընտրողների ցուցակների՝ ըստ 38 տարածքային

ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքների, բաժանման և տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչների վրա ներբեռնման գործընթացը մեկնարկելու, ինչպես նաև հիշողության կրիչների տեղադրման գործընթացի իրականացման ժամկետի և վայրի վերաբերյալ:

Տեխնիկական սարքավորումների մեջ ներբեռնվող՝ էլեկտրոնային եղանակով կազմված ընտրողների ցուցակը քվեարկության օրվանից 5 օր առաջ, լիազոր մարմնի կողմից տրամադրվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հատուկ ծրագրային ապահովմամբ կազմակերպել է ընտրողների էլեկտրոնային ցուցակների բաժանումն՝ ըստ տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքների և ներբեռնումը տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչների վրա, ինչպես նաև պատահական ընտրանքի սկզբունքով իրականացրել է այդ կրիչներում առկա տեղեկատվության ստուգումը:

Տեխնիկական սարքավորումները, սահմանված կարգի համաձայն ունեին քվեարկության մասնակիցներին հաշվառելու, կրկնակի գրանցումը բացառելու ծրագրային հագեցվածություն: Թվով 1996 տեղամասերից՝ 560 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործվել է մեկ տեխնիկական սարքավորում, իսկ թվով 1436 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործվել են մեկից ավելի տեխնիկական սարքավորումներ՝ 861-ում՝ 2-ական տեխնիկական սարքավորում, 575-ում՝ 3-ական տեխնիկական սարքավորում, որոնց աշխատանքը եղել է սինքրոնիզացված, ինչը հնարավորություն է տվել ընտրողին գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովում օգտագործվող տեխնիկական սարքավորումներից յուրաքանչյուրով՝ բացառելով նաև նույն ընտրողի կրկնակի գրանցման հնարավորությունը մյուս տեխնիկական սարքավորման միջոցով:

2020թ. Սմարթմատիք («Smartmatic») ընկերությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պահանջով իրականացրել է տեխնիկական սարքավորումների ծրագրային ապահովման կենտրոնական բաղադրիչի թարմացումը, որը հնարավություն է ընձեռնում բարձրացնել գործընթացի կառավարելիությունը:

Ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետների համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից պատրաստվել և հրապարակվել է առանձին ձեռնարկ և հուշաթերթ: Պատրաստվել և հրապարակվել է տեղեկատվական բնույթի պաստառներ, հանրային իրազեկման տեսահոլովակներ:

Թվով 1996 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործված 4007 տեխնիկական սարքավորումներից խնդիրներ են ծագել ընդամենը 73 տեխնիկական սարքավորման գործարկման հետ: Մասնավորապես, տարբեր տեխնիկական պատճառներով խափանվել և նորերով են փոխարինվել ընդամենը՝ 40 տեխնիկական սարքավորում, որոնցից 23-ը՝ քվեարկության նախորդ օրը, իսկ 17-ը՝

քվեարկության օրը: Գրանցվել են նաև տեխնիկական և ծրագրային առանձին խնդիրներ, որոնք անմիջապես լուծում են ստացել: Թվով 3447 տեխնիկական սարքավորում աշխատել են սինքրոնիզացված և ընդամենը 18 տեխնիկական սարքավորման պարագայում են խնդիրներ ծագել, որոնց անհապաղ լուծում է տրվել:

Ընտրական օրենսգրքով սահմանված կարգի համաձայն՝ քվեարկության ավարտից հետո, տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչներում առկա ընտրությունների մասնակցության և ընտրողների մատնահետքերը պարունակող տեղեկատվությունը ներմուծվել է համակարգիչներ և Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետների պահպանմամբ փոխանցվել Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Ազգային ժողովի ընտրության նախնական արդյունքները հրապարակելուց ոչ ուշ, քան 72 ժամ հետո, հատուկ համակարգչային ծրագրի միջոցով, ամփոփել է տեխնիկական սարքավորումներից դուրս բերված տվյալները և հրապարակել հանձնաժողովի համացանցային կայքում:

Արդյունքում, քվեարկության օրը, բոլոր 1998 տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընտրողների գրանցումն իրականացվել է տեխնիկական սարքավորումների միջոցով և քվեարկության ավարտից հետո բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներում տպվել են տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների վերաբերյալ՝ Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված տեղեկանքները:

դ) Հանրային իրազեկում և հրապարակայնություն

Ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մշակում և հրապարակում է ուսումնական նյութեր՝ ընտրական հանձնաժողովների անդամների, մասնագետների, թեկնածուների, վստահված անձանց, դիտորդների և ընտրողների համար:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակվել է 11 ուղեցույց և ուսումնական ձեռնարկ (հուշաթերթ)՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների, վստահված անձանց, դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար, նախընտրական քարոզչության ֆինանսավորման կարգի վերաբերյալ, էլեկտրոնային քվեարկության իրականացման կարգի և ժամկետների վերաբերյալ, ուղեցույց վատ տեսողության պատճառով քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար (նշված ուղեցույցը հրապարակվել է նաև բրայլյան այբուբենով), քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ, տեխնիկական սարքավորումներն սպասարկող մասնագետների համար: Նշված ուղեցույցներից 1-ը հրապարակվել է նաև օտարալեզու (անգլերեն) տարբերակով:

Հրատարակվել է հանրային իրազեկման 9 հոլովակ, տեղեկատվական բնույթի 7 պաստառ, այդ թվում՝ քվեարկության կարգի պարզաբանման վերաբերյալ պաստառ ժամկետային զինծայառողների համար, որն առաքվել է զորամասեր:

Հայաստանում ընտրական գործընթացների աջակցության ծրագրի շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրականացրեց ընտրողների իրազեկման արշավ՝ պատրաստելով չորս ուսուցողական հոլովակ՝ քվեարկության կարգի, ընտրական տեղամասերում ԿՈՎԻԴ-19-ից պաշտպանության կանոնների պահպանման, կանանց մասնակցության խթանման մասին: Հոլովակները ցուցադրվել են ազգային հեռուստաընկերություններով և սոցիալական մեդիայում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ՝ հաշմանդամություն ունեցող ընտրողների ընտրական իրավունքի իրացումն ապահովելու համար: Մասնավորապես, քվեարկության կարգի վերաբերյալ հոլովակներն ապահովվել են սուրդո թարգմանությամբ և առաջին անգամ կիրառվել է նաև հոլովակի բանավոր խոսքի զուգակցումը տեքստային եղանակով, նախապատրաստվել է քվեարկության կարգի, ինչպես նաև քվեարկության կարգը պարզաբանող հանրային իրազեկման թերթիկների տպագրությունը խոշորացված տառատեսակով և բրայլյան գրով, բոլոր տեղամասային կենտրոններին տրամադրվել են բրայլյան հատուկ կաղապարներ, որոնք ապահովում են ինքնուրույն քվեարկության իրականացումը: Տեղամասերի վրա փակցվել է մատչելիության վերաբերյալ տեղեկություններ:

Քվեարկության կարգի վերաբերյալ երկու տեղեկատվական ուղեցույց-թերթիկները մշակվել և տպագրվել են նաև ազգային փոքրամասնությունների լեզուներով և հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված ձևաչափով, որոնք տրամադրվել են ընտրողներին հանրային սննդի, առևտրի օբյեկտների միջոցով, հանրային տրանսպորտում, կամավորականների, տարածքային ընտրական հանձնաժողովների անդամների, տեղամասային ընտրական հանձնաժողովների դասընթացների մասնակիցների ջանքերով:

Հարկ է նկատել, որ առաջին անգամ այս ուղեցույցները, ընտրություններին մասնակցող կուսակցությունների և դաշինքների ցանկը տպագրվեցին նաև ընտրություններին նախորդող վերջին մարդահամարի տվյալներով առավել մեծ թվով մշտական բնակչություն ունեցող առաջին չորս ազգային փոքրամասնությունների լեզուներով և համապատասխան համայնքների ներկայացուցիչների միջոցով փոխանցվեցին շահառուներին:

Այսպիսիով, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հանրային իրազեկմանն ուղղված միջոցառումների շրջանակներում պատարաստվել և հրապարակվել են՝

Վիդեո հոլովակներ

- ✓ Երեք անիմացիոն պաստառ ուղղված ընտրողների մասնակցության խթանմանը
- ✓ Մեկ սոցիալական հոլովակ կանանց մասնակցության մասին
- ✓ Մեկ անիմացիոն հոլովակ քվեարկության կարգի մասին
- ✓ Մեկ անիմացիոն հոլովակ տեղամասերում քվեարկության օրը ԿՈՎԻԴ-19 կանխարգելման միջոցների մասին
- ✓ Մեկ ուսուցողական հոլովակ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների համար
- ✓ Մեկ խաղարկային հոլովակ քվեարկության կարգի մասին

Տպագիր նյութեր

- ✓ 300,000 տեղեկատվական-թերթիկ քվեարկության կարգի մասին հայերենով
- ✓ 300,000 տեղեկատվական-թերթիկ քվեարկության կարգի մասին «կարելի է / չի կարելի» հայերենով
- ✓ 600 տեղեկատվական-թերթիկ քվեարկության կարգի մասին՝ բրայլյան գրով
- ✓ 600 տեղեկատվական-թերթիկ քվեարկության կարգի մասին «կարելի է / չի կարելի» բրայլյան գրով
- ✓ 3000 տեղեկատվական-թերթիկ քվեարկության կարգի մասին խոշոր տառատեսակով
- ✓ 3000 տեղեկատվական-թերթիկ քվեարկության կարգի մասին «կարելի է / չի կարելի» խոշոր տառատեսակով
- ✓ 3500 տեղեկատվական-թերթիկ քվեարկության կարգի մասին ռուսերենով
- ✓ 3500 տեղեկատվական-թերթիկ քվեարկության կարգի մասին «կարելի է / չի կարելի» ռուսերենով
- ✓ 3000 տեղեկատվական-թերթիկ քվեարկության կարգի մասին եզդիերենով
- ✓ 3000 տեղեկատվական-թերթիկ քվեարկության կարգի մասին «կարելի է / չի կարելի» եզդիերենով
- ✓ 2000 տեղեկատվական-թերթիկ քվեարկության կարգի մասին քրդերենով
- ✓ 2000 տեղեկատվական-թերթիկ քվեարկության կարգի մասին «կարելի է / չի կարելի» քրդերենով
- ✓ 1000 տեղեկատվական-թերթիկ քվեարկության կարգի մասին ասորերենով
- ✓ 1000 տեղեկատվական-թերթիկ քվեարկության կարգի մասին «կարելի է / չի կարելի» ասորերենով
- ✓ 6500 տեղեկատվական-թերթիկ քվեարկության օրը ԿՈՎԻԴ-19 կանխարգելիչ միջոցների մասին ընտրողների նույնականացման սարքերի մասնագետների համար
- ✓ 9000 պաստառներ բոլոր տեղամասերում քվեարկության օրը ԿՈՎԻԴ-19 կանխարգելիչ միջոցների մասին
- ✓ 3500 տեղեկատվական-թերթիկ ընտրություններին մասնակցող կուսակցությունների և դաշինքների ցանկ ռուսերեն, եզդիերեն, քրդերեն և ասորերեն:

Գովազդային վահանակներ

- ✓ 68 վահանակ՝ ընտրողների մասնակցության խթանմանն ուղղված պաստառներով, տեղադրված Երևանում և մարզերում
- ✓ 10 ԼԵԴ էկրաններ Երևանում՝ ընտրողների մասնակցության խթանմանն ուղղված անիմացիոն պաստառների ցուցադրմամբ
- ✓ 30 ավտոբուսներ՝ ընտրողների մասնակցության խթանմանն ուղղված պաստառներով
- ✓ 118 վահանակ՝ Երևանի մետրոպոլիտենի կայարաններում՝ ընտրողների մասնակցության խթանմանն ուղղված պաստառներով
- ✓ ընտրողների մասնակցության խթանմանն ուղղված պաստառներ ցուցադրող սքրոլերներ (պտտվող էկրաններ) չորս ավտոբուսային կանգառներում:

Բոլոր ուսումնադիդակտիկ նյութերը հրապարակվելուց հետո տեղադրվում էին նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում և դրանց մասին տրվում էին մամուլի հաղորդագրություններ:

Նման համընդգրկուն արշավն ապահովեց ընտրական գործընթացքում ներգրավված բոլոր խմբերի ներկայացուցիչներին, այդ թվում՝ կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին առավել մատչելի և ընդգրկուն ծանոթանալ քվեարկության կարգին և հնարավորինս արդյունավետ իրացնել իրենց ընտրական իրավունքը:

Ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին, դիտորդական առաքելություն իրականացնող միջազգային և տեղական կազմակերպություններին, հավատարմագրված զանգվածային լրատվության միջոցներին տրամադրվել են Ընտրական օրենսգրքեր և ուղեցույցներ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը անցկացրել է պարբերական հանդիպումներ և քննարկումներ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների հետ:

Քվեարկության օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մամուլի սրահում կազմակերպվել է ընտրական ամբողջ գործընթացը լուսաբանող շուրջօրյա բրիֆինգ, որին մասնակցել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները և աշխատակազմի աշխատակիցներն, ինչպես նաև ընտրական գործընթացում առանձին գործառույթներ իրականացնող պետական այլ մարմինների ներկայացուցիչներ: Նմանատիպ բրիֆինգի կազմակերպման նպատակն էր իրականացնել ընտրական գործընթացի լիակատար թափանցիկության և լուսաբանման ապահովումը:

Ընտրական օրենսգիրքը սահմանում է այն անձանց շրջանակը, ովքեր կարող են մասնակցել Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների նիստերին: Ընտրական հանձնաժողովների նիստերը հրավիրվել և անցկացվել են Ընտրական օրենսգրքի հիմնարար սկզբունքներին՝ (հրապարակայնություն, թափանցիկություն) համապատասխան: Բոլոր նիստերի վերաբերյալ առկա են եղել

հրապարակային ծանուցումներ, նիստերն անցկացվել են բաց, առկա չէ գեթ մեկ դեպք, երբ որևէ իրավասու անձի թույլ չի տրվել մասնակցել հանձնաժողովների նիստերին:

Ընտրությունների հրապարակայնության և թափանցիկության, ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության, ընտրողների իրազեկման մակարդակի բարձրացման ապահովման ճանապարհին կարևորելով տեղեկատվության հասանելիությունը առանձնակի ուշադրություն է դարձվել Կենտրոնական ընտրական հանձաժողովի կայքի աշխատանքներին:

Համապետական ընտրություններին գործարկվեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքի ամբողջությամբ նորացված տարբերակը: Ի դեպ, ամբողջ ընտրական գործընթացի ժամանակ զուգահեռաբար գործարկվել են կայքի և հին և նորացված տարբերակները, ու թարմացված տեղեկատվությունը հասանելիություն է ապահովել կայքի երկու տարբերակներում էլ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի միջոցով հնարավոր էր ծանոթանալ ընտրական հանձնաժողովների տնօրինության տակ գտնվող ողջ տեղեկատվությանը, ընտրական օրենսդրությանը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերին, ընտրական գործընթացներին վերաբերող միջոցառումներին, կայքի մշտական և անբաժանելի մասը կազմող՝ ընտրողների ռեգիստրին, որը ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան ըստ տեղամասերի, քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 21 օր և 7 օր առաջ էլեկտրոնային եղանակով ներկայացվել է լիազոր մարմնի կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ հանձնաժողովի համացանցային կայքում որոնման հնարավորությամբ տեղադրելու համար:

Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան մշակված և գործարկված ծրագրային միջոցներով ապահովվել է՝

- տարածքային ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների տվյալները մուտքագրելու, ըստ տարբեր տվյալների որոնելու, ֆիլտրելու, տվյալների ելքային փաստաթղթի ձևավորման (Excel-ի աղյուսակներ) և տարածքային ընտրական հանձնաժողովների անդամների տվյալները կայքում հրապարակելու հնարավորությունը,

- նախապատվության քվեակարգով քվեարկության իրականացման նպատակով էլեկտրոնային քվեաթերթիկի ձևավորման, քվեարկության գաղտնիության ապահովման, նախապատվությամբ քվեարկելու, քվեարկության արդյունքներն ամփոփելու, արդյունքների ելքային փաստաթղթի ձևավորման հնարավորությունները,

- ըստ ընտրական տեղամասերի տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխման իրականացումը՝ օգտագործելով պատահականության և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի

որոշմամբ սահմանված որակական չափանիշներին համապատասխան ընտրանքի հնարավորությունը.

- վարչական վարույթներով ծանուցումների կազմակերպումը:

Արտերկրից առցանց քվեարկության նպատակով գործարկվել է էլեկտրոնային եղանակով քվեարկության համակարգը, որն իր մեջ ընդգրկում է կոդավորման միջոցները, էլեկտրոնային քվեաթերթիկի ձևավորումը, օգտվողների (առցանց քվեարկելու իրավունք ունեցողների) գրանցումը, գրանցված օգտվողների կողմից սեփական կոդերի ներմուծումը, նրանց կողմից էլեկտրոնային քվեարկության իրականացումը, քվեարկության գաղտնիության ապահովումը, քվեարկության արդյունքների ամփոփումը, ելքային փաստաթղթի ձևավորումը, արդյունքների հրապարակման հնարավորությունը:

Նախագծվել, մշակվել և ներդրվել են քվեարկության օրը տարածքային ընտրական հանձնաժողովներից էլեկտրոնային եղանակով ստացված տվյալների առցանց հրապարակման հնարավորություններ՝ գրաֆիկական և ըստ տեղամասերի աղյուսակավորման տեսքով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տեղեկատվական կենտրոնում և համացանցային կայքում, ինչպես նաև այդ տվյալները հեռուստաընկերություններին անմիջականորեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ցանցից փոխանցման ծրագրա-տեխնիկական միջոցներ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքից հնարավոր էր հետևել տեղամասային կենտրոններում տեղադրված տեսախցիկների առցանց հեռարձակմանը՝ 1517 տեղամասերից: Մոտ 1350 տեղամասերից հեռարձակման ընթացքում որևէ խափանում առկա չի եղել: Ընդհանուր հեռարձակման տևողությունը կազմել է 70.941 ժամ, խափանումները միասին վերցրած կազմել են 357 ժամ, ընդհանուր հասանելիությունը 47 ժամվա կտրվածով կազմել է 99.5%: Ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունների և դաշինքների համար ապահովվել է ավելի լայն հնարավորություն տեսահսկում իրականացնելու համար:

ե) Թեկնածուների առաջադրումը, գրանցումը

Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին առաջադրվել էին աննախադեպ թվով կուսակցություններ և կուսակցությունների դաշինքներ, 22 կուսակցություն և կուսակցությունների 4 դաշինք: Ընտրություններին առաջադրված 22 կուսակցությունները և կուսակցությունների 4 դաշինքները գրանցվել են Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում:

Ընտրական օրենսգրքի 90-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) կամ դաշինքի անդամ կուսակցությունները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն, իրավունք ունեն դիմում ներկայացնելու ինքնաբացարկի մասին:

Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին առաջադրված՝ «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցությունը քվեարկության օրվանից 10 օր առաջ՝ 10.06.2021թ. ներկայացրեց ինքնաբացարկի մասին դիմում, որը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից բավարարվեց (10.06.2021թ. ԿԸՀ 132-Ա որոշում):

Ընտրական օրենսգրքի 83-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Համապետական ընտրական ցուցակը կարող է ունենալ երկրորդ մաս, որում, սույն հոդվածի 6-րդ մասին համապատասխան, կարող են ընդգրկվել ընտրություններին նախորդող վերջին մարդահամարի տվյալներով առավել մեծ թվով մշտական բնակչություն ունեցող առաջին չորս ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ»:

Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին մասնակցող 22 կուսակցություններից և կուսակցությունների 4 դաշինքներից չորս կուսակցության՝ «Հայ ազգային կոնգրես» կուսակցություն, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն, «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն, «Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն և կուսակցությունների 1 դաշինքի՝ Հայաստան դաշինք, ընտրական ցուցակներն են ունեցել երկրորդ մասեր, որոնցում ընդգրկված են եղել 14 թեկնածուներ:

զ) Նախընտրական քարոզչություն, քարոզչության ֆինանսավորում

Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում սահմանված ժամկետներում հրապարակված են եղել՝

- նախընտրական միջոցառումների համար անվճար տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը (ընդհանուր թիվը 824, այդ թվում՝ 29-ը Երևանում).
- քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացված անվճար տեղերի ցանկը (ընդհանուր թվով 1066, այդ թվում՝ 419-ը Երևանում).
- հեռուստառադիոընկերությունների կողմից տրամադրվող վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը:

Ըստ նախապես ներկայացված հայտերի Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրականացրել է հինգ քառակուսի մետրը գերազանցող մակերեսով արտաքին գովազդային վահանակների բաշխումը ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների միջև:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ սահմանվել է հանրային ռադիոյից և հանրային հեռուստատեսությունից ընտրություններին մասնակցող

կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը:

Նախընտրական քարոզչության համար Ընտրական օրենսգրքով սահմանված բոլոր միջոցառումների կազմակերպման նախապատրաստական աշխատանքները կատարված են եղել մինչև նախընտրական քարոզչության մեկնարկը, ինչն ապահովել է բոլոր թեկնածուների համար հավասար պայմաններ և հնարավորություններ հենց նախընտրական քարոզչության մեկնարկի առաջին իսկ օրվանից:

Ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը հաստատել և հրապարակել է վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը:

2021թ. Ազգային Ժողովի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության վճարովի կարգով տրամադրվող եթերաժամանակի սակագնի սահմանման և անփոփոխության օրենսդրական պահանջների, ինչպես նաև եթերաժամանակի ոչ խտրական տրամադրման սկզբունքի խախտումներ չեն արձանագրվել:

Նախընտրական քարոզչությանը վերաբերող դիմում-բողոքներ չեն ստացվել նաև պետական մարմիններից, հասարակական և միջազգային կազմակերպություններից, զանգվածային լրատվամիջոցներից և քաղաքացիներից:

Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ֆինանսավորման նկատմամբ վերահսկողությունն իրականացրել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը:

Ազգային ժողովի արտահերթ ընտրություններում գրանցված կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները սահմանված կարգով բացել են նախընտրական հիմնադրամներ:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը, ինչպես և պահանջվում է Ընտրական օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասով, նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ կուսակցություններից և կուսակցությունների դաշինքներից ստացել է իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը և հայտարարագրերում ամրագրված ծախսերը հիմնավորող փաստաթղթերը (պայմանագրեր, վճարման հանձնարարագրեր, հաշիվ ապրանքագրեր և այլ ֆինանսական փաստաթղթեր): Միաժամանակ, վերահսկիչ-

վերստուգիչ ծառայությունը կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և հիմնադրամներից կատարված ծախսերի վերաբերյալ, երեք աշխատանքային օրը մեկ, տեղեկանքներ է ստացել Կենտրոնական բանկից, որտեղ բացված են եղել նախընտրական հիմնադրամներ:

Ուսումնասիրելով նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը և հայտարարագրերին կից փաստաթղթերը, դրանց տվյալները համադրելով Կենտրոնական բանկից ստացած տեղեկատվության հետ՝ վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը կազմել է ամփոփ տեղեկանք և հայտարարագրերը ստանալուց հետո եռօրյա ժամկետում ներկայացրել Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, որը հրապարակվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Վերահսկողական այս գործառույթն իրականացվել է հրապարակայնության և թափանցիկության պայմաններում: Բացի այն, որ կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը, բանկից ստացած տեղեկանքները և վերջիններիս ուսումնասիրության արդյունքում վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից կազմած ամփոփ տեղեկանքը հրապարակվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում, այդ գործընթացի նկատմամբ անմիջական վերահսկողություն իրականացնելու հնարավորություն են ունեցել Ազգային ժողովում գործող երկու խմբակցությունների (Իմ քայլը դաշինք և «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն) կողմից նշանակված աուդիտորի որակավորում ունեցող մեկական աուդիտորներ:

Նախընտրական քարոզչության ընթացքում արձանագրված առանձին խախտումներ վերաբերել են արգելված վայրերում քարոզչական պաստառներ փակցնելուն կամ այլ մասնավոր դեպքերի, որոնք որևէ ազդեցություն չեն ունեցել ընտրության արդյունքի վրա: Նշված դեպքերի վերաբերյալ ներկայացված դիմումները, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներով ներկայացվող հաղորդումները կամ տեղեկությունները հանդիսացել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և տարածքային ընտրական հանձնաժողովների ուսումնասիրման և քննարկման առարկա:

Է) Քվեարկություն

Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի ընտրությունների անցկացման նպատակով հանրապետության տարածքում կազմավորվել է թվով 2008 ընտրական տեղամաս, որից 12-ը քրեակատարողական հիմնարկներում:

Քվեարկության օրը, առավոտյան ժամը 7.00-ին 1996 տեղամասային կենտրոններում կայացել են տեղամասային ընտրական հանձնաժողովների նիստերը և ժամը 8.00-ին բացվել են տեղամասային կենտրոններն ու սկսվել է քվեարկությունը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերում ընդգրկված թվով 16.064 քաղաքացիներից և որպես մասնագետ ներգրավված 4.139 քաղաքացիներից քվերակության օրը բացակայել են տեղամասային ընտրական հանձնաժողովի 115 անդամներ:

Ընտրական օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների և քվեարկությանը ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ մասնագետը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով ստուգում է տեխնիկական սարքավորումների աշխատանքը, մուտքագրում է ընտրական տեղամասի նույնականացման տվյալները և տպում է տվյալ տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանք: Տեղեկանքը սոսնձվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում»:

Ընդհանուր թվով 4007 տեխնիկական սարքավորումներից ընդամենը մոտ 3-ը տեխնիկական պատճառներով պայմանավորված չեն տպել նշված տեղեկանքը (համեմատության համար նշեմ, որ 2017թ-ին այդ թիվը 73 էր, 2018թ-ին՝ 37): Հարկ է արձանագրել, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պահանջով իրականացված տեխնիկական սարքավորումների ծրագրային ապահովման փոփոխությամբ (քվեարկության նախորդ օրը տեխնիկական սարքավորումները սպասարկող մասնագետներն իրականացնում են տպիչի ստուգում) պայմանավորված 2021 թվականի ընտրությունների ժամանակ բոլոր 1996 տեղամասային ընտրական հանձնաժողովներում տպվել են գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ժամը 9.00-ին, տեղեկություններ է հրապարակել ընտրությունների ընթացքի մասին, իսկ ժամը 12.00-ից սկսած՝ մինչև ժամը 21.00-ն, երեքժամյա պարբերականությամբ՝ ըստ մարզերի, մարզկենտրոնների, 10 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների և Երևան քաղաքի հրապարակել է տեղեկություններ մինչև նախորդ ժամը քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի վերաբերյալ: Քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի մասին տեղեկությունների հրապարակումից հետո դրանք ըստ ընտրական տեղամասերի տեղադրվել են հանձնաժողովի համացանցային կայքում:

Քվեարկության օրը հանրապետության 2008 ընտրական տեղամասերում միասին վերցրած ընտրական գործընթացին հետևել են ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների թվով 23.031 վստահված անձ, թվով 1779 ընտրական տեղամասեր են այցելել ընդհանուր թվով 8.411 տեղական և միջազգային դիտորդներ և թվով 1819 ՀԼՄ ներկայացուցիչներ:

Ընտրական օրենսգիրքը սահմանել էր կանոնակարգումներ, համաձայն որի դիտորդի կողմից որևէ թեկնածուի, ընտրություններին մասնակցող որևէ

կուսակցության աջակցելու, ինչպես նաև դիտորդի և զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի կողմից սույն օրենսգրքի պահանջներն այն եղանակով խախտելու դեպքում, որն էապես խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովի նախագահը կարող է դիտորդին հեռացնել հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից՝ ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ (հոդված 31, մաս 5, 8): Ընտրական հանձնաժողովի նախագահը կարող է վստահված անձին հեռացնել հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից՝ ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ (հոդված 34, մաս 4): Եթե քվեարկության սենյակում գտնվող դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարում է քվեարկության բնականոն ընթացքը, ապա տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավասու է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ սահմանելու քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվը (հոդված 65, մաս 7): 2008 տեղամասային ընտրական հանձնաժողովներից և որևէ մեկի կողմից այս իրավանորմերը չեն կիրառվել:

ը) Քվեարկության արդյունքների ամփոփում

Քվեարկության օրը ժամը 20:00-ին փակվել են բոլոր 2008 ընտրական տեղամասերը և տեղամասային ընտրական հանձնաժողովներն ընտրական օրենսգրքով սահմանված կարգով սկսել են քվեարկության արդյունքների ամփոփման նիստերը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովները, Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով, քվեարկության ավարտից հետո՝ 12 ժամվա ընթացքում, ավարտել են քվեարկության արդյունքների ամփոփումը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ոչ ուշ, քան քվեարկության հաջորդ օրը, ժամը՝ 00.00-ից սկսած իրականացրել է քվեարկության արդյունքների աղյուսակավորում՝ ըստ ընտրական տեղամասերի՝ իր պաշտոնական կայքում հրապարակելով ընտրությունների նախնական արդյունքներն՝ ըստ յուրաքանչյուր ընտրական տեղամասի տվյալների: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքով ռեալ ժամանակի մեջ հնարավոր էր հետևել ընտրության արդյունքների ամփոփմանը՝ ստանալով յուրաքանչյուր ընտրական տեղամասի տվյալները: Ընտրության արդյունքների ամփոփման ամբողջ գործընթացն իրականացվել է բաց և թափանցիկ:

Ընտրական տեղամասերի շուրջ 98%-ում վստահված անձինք, դիտորդները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները ներկա են գտնվել քվեարկության արդյունքերի ամփոփման ողջ գործընթացին: 2008 ընտրական տեղամասերից 1517-ում քվեարկության արդյունքերի ամփոփման ողջ գործընթացին հնարավոր էր հետևել առցանց՝ տեղամասային կենտրոններում տեղադրված տեսախցիկների միջոցով: Հարկ է նկատել, որ ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն ունեին ավելի լայն հնարավորություններ տեսախցիկներից օգտվելու համար:

Առկա չէ որևէ բողոք կամ նույնիսկ ահանգանգ, որ տեղամասային ընտրական հանձնաժողովում ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց չի տրվել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով:

Եթե տեխնիկական սարքավորումն անխափան աշխատել է քվեարկության ընթացքում, ապա Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորման միջոցով տպվում է տեղեկանք, որում նշվում են տարածքային ընտրական հանձնաժողովի և ընտրական տեղամասի համարները, տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների հերթական համարը համապատասխան ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում: Տեղեկանքը պետք է պարունակի նշում այն ընտրողների վերաբերյալ, որոնց գրանցումն իրականացվել է անձը հաստատող փաստաթղթի տվյալները ստեղնաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու միջոցով:

Տեղեկանքը տպելու անհնարինության դեպքում այդ մասին համապատասխան գրառում է կատարվում գրանցամատյանում:

Տեղեկանքի մեկ օրինակը, ստորագրված տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից և կնքված հանձնաժողովի կնիքով, տեղադրվում է պարկում:

Տեղեկանքի մեկական օրինակ, ստորագրված տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից և կնքված հանձնաժողովի կնիքով, ըստ պահանջի տրամադրվում է ամփոփման նիստին ներկա գտնվող թեկնածուներին, դիտորդներին և ընտրություններին մասնակցող կուսակցության մեկական վստահված անձի: Նշված տեղեկանքը չտպագրվելու կամ իրավասու անձանց չտրամադրելու որևէ դեպք առկա չի եղել:

թ) Քվեարկության մասնակցած ընտրողների ստորագրած ցուցակների հրապարակում

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը սահմանել է քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակում՝ բացառությամբ զորամասում, քրեակատարողական հիմնարկում և ձերբակալված

անձանց պահելու վայրում կազմվող ցուցակների: Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 73-րդ հոդվածի 3.1-րդ մասի համաձայն.

«Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից սկսած, իրականացնում է ընտրողների ցուցակների սկանավորում, որին կարող են հետևել ընտրական հանձնաժողովների անդամները, թեկնածուները, վստահված անձինք, դիտորդները և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:

Ընտրողների ցուցակները սկանավորվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով և չափորոշիչներին համապատասխան այնպես, որ տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը, ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը, հաշվառման վայրի հասցեն, ինչպես նաև ընտրողի ստորագրության, ընտրողների գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամի անհատական կնիքի համար նախատեսված սյունակները լինեն տեսանելի:

Ընտրողների սկանավորված ցուցակները ոչ ուշ, քան սկանավորման աշխատանքներն սկսվելուց 24 ժամ հետո պաշտոնապես հրապարակվում և ներբեռնելու և, ըստ ընտրական տեղամասերի, որոնման հնարավորությամբ տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում»:

Ընտրողների ստորագրված ցուցակները սահմանված կարգով և ժամկետներում տեղադրվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում, սահմանված վերջնաժամկետից ավելի քան երկու ժամ առաջ: Նշվածի մասին հրապարակայնորեն իրազեկվել է հանրությունը՝ մամուլի հաղորդագրություններ տարածելու միջոցով:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ օրենսգրքով սահմանված իրավասու անձը կարող է ներկայացնել այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմում համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո երրորդ օրը՝ ժամը 11.00-ն:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում սահմանված ժամանակահատվածում, անգամ այդ ժամանակահատվածից հետո, տարածքային ընտրական հանձնաժողովներում, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովում չի ստացվել որևէ դիմում այլ անձի փոխարեն քվեարկելու մասին:

ժ) Քվեարկության արդյունքների վերահաշվարկ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն կամ համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն կամ վստահված անձը, եթե նրանք ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝ ընտրական տեղամասում քվեարկության

արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում, իրավունք ունեն սույն օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում բողոքարկելու տվյալ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները՝ տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելով ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին (այսուհետ՝ վերահաշվարկ) դիմում:»

Թվով 3 տարածքային ընտրական հանձնաժողովներում (թիվ 2, 3, 9) ներկայացվել է ընդհանուր թվով 4 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ՝ 4 դիմում: Դիմումները ներկայացված են եղել «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության վստահված անձանց կողմից: Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել են նաև դիմումներ «Ինքնիշխան Հայաստան» կուսակցության լիազոր ներկայացուցչի և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից, որոնք վերաբերվել են տարբեր տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ անճշտություններին: Ներկայացված դիմումները վերաբերվել են ընդհանուր թվով 24 տեղամասերի տվյալներին:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջների հաշվառմամբ տարածքային ընտրական հանձնաժողովները իրականացրել են վերահաշվարկ ինչպես վստահված անձանց ներկայացրած դիմումներով, այլև սեփական նախաձեռնությամբ են իրականացրել վերահաշվարկ՝ հաշվի առնելով նաև «Ինքնիշխան Հայաստան» կուսակցության լիազոր ներկայացուցչի և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից նշված դիմումատուների մատնանշած ընտրական տեղամասերը: Թիվ 2, 3, 4, 5, 6, 7, 9, 10, 11, 13, 14, 17, 23, 24, 25, 33, 34 և 35 տարածքային ընտրական հանձնաժողովները, սեփական նախաձեռնությամբ իրականացրել են քվեարկության արդյունքների վերահաշվարկ: Ընդհանուր առմամբ վերահաշվարկվել են 82 ընտրական տեղամասերի (թիվ 2/1, 2/2, 2/3, 2/6, 2/32, 2/44, 3/20, 3/26, 3/27, 4/3, 4/4, 4/5, 4/6, 4/8, 4/9, 4/10, 4/11, 4/16, 4/40, 4/44, 5/4, 5/14, 6/9, 6/13, 6/18, 6/22, 6/26, 7/7, 9/4, 9/30, 9/32, 9/33, 9/43, 9/44, 9/55, 10/33, 10/43, 11/11, 11/17, 11/22, 13/31, 14/8, 14/40, 17/14, 17/38, 23/38, 23/46, 23/47, 23/50, 24/4, 24/7, 25/12, 25/19, 25/21, 25/25, 25/34, 25/39, 25/43, 33/31, 34/2, 34/3, 34/4, 34/5, 34/6, 34/8, 34/9, 34/10, 34/12, 34/13, 34/19, 34/20, 34/21, 34/22, 34/24, 34/27, 34/29, 34/37, 34/44, 34/60, 34/63, 34/68, 35/30) արդյունքներ: Արդյունքում՝ թվով 16 տեղամասերում նախապես արձանագրված քվեարկության արդյունքները որևէ փոփոխություն չեն կրել, թվով 31 տեղամասերում թեկնածուներին տրված կողմ ձայների որևէ փոփոխություն չի արձանագրվել: Մնացած 51 տեղամասերում արձանագրվել են ոչ էական բնույթի փոփոխություններ՝ պայմանավորված վավեր կամ անվավեր քվեաթերթիկների ճանաչման հետ:

Հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ տարածքային ընտրական հանձնաժողովը վերահաշվարկն իրականացնում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների

ամփոփման համար՝ օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխան՝ այսինքն, վերահաշվարկվում են բոլոր արդյունքները: Վերահաշվարկների արդյունքում համապատասխան հաղորդումներ են ներկայացվել իրավապահ մարմիններին:

Ժա) Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչում

Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանված է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչելու ինստիտուտը: Համաձայն նշված իրավադրույթի.

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեն միայն՝

1) ընտրություններին մասնակցող կուսակցությունը, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն.

2) վստահված անձը, եթե քվեարկության օրը ներկա է գտնվել քվեարկության սենյակում կամ ներկա է գտնվել տեղամասային ընտրական հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստին.

3) համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, եթե արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին:

Ուշագրավ է, որ նման իրավունք վերապահվում է թե ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքին), և թե ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուին: Ի դեպ բնավ պարտադիր չէ նրանց կողմից տեղամասային կենտրոնում ներկա գտնվելու հանգամանքը:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ներկայացնելու իրավունք ունենին թվով 25 կուսակցություններ և կուսակցությունների դաշինք, նրանց ընտրական ցուցակներում ընդգրկված ընդհանուր թվով 2510 թեկնածուներ, տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերում ընդգրկված ընդհանուր թվով 16.064 անդամներ, 23.031 վստահված անձինք: Այլ կերպ ասած ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ներկայացնելու իրավունք ունենին ընդհանուր թվով 41.630 սուբյեկտներ, որոնցից ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչելու վերաբերյալ որևէ դիմում չի ներկայացվել:

Ժբ) Տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում խախտումների վերաբերյալ գրառումներ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն. «Եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել սույն օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունեն պահանջելու, որ իրենց

գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:»:

Նույն օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Ազգային ժողովի, Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ տարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ արձանագրություն չի կազմում, քվեարկության արդյունքների վերահաշվարկի համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետներում ուսումնասիրում է տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումները, ուսումնասիրության արդյունքներն ամփոփում է հանձնաժողովի նիստում և այդ մասին ընդունած որոշումը ներկայացնում Կենտրոնական ընտրական հանձնաժողով»:

Միայն 469 (կամ ընդհանուր տեղամասերի 23.3%-ում) տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում են կատարվել թվով 1035 գրառումներ, իսկ 1539 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում որևէ գրառում առկա չէ:

Թվով 2008 տեղամասերից միայն մեկ տեղամասի քվեարկության արդյունքների արձանագրություններում է առկա նշում հատուկ կարծիք ունենալու մասին: Ուշագրավ է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովների ընդհանուր թվով 16.064 անդամներից միայն մեկն է ներկայացրել հատուկ կարծիք:

Տարածքային ընտրական հանձնաժողովները կայացրել են որոշումներ ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ, որոնցով ամրագրվել է, որ 2021 թվականի հունիսի 20-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններում համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 20.06.2021թ., արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները որևէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Ժգ) Դիմում բողոքների քննարկում

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում»:

2021 թվականի հունիսի 20-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում մինչև քվեարկության օրը՝ 20.06.2021թ., տարածքային ընտրական հանձնաժողովներում ստացվել է մեկ դիմում՝ նախընտրական քարոզչության կարգի ենթադրյալ խախտման վերաբերյալ, որով պահանջվում էր հեռացնել նախընտրական շտաբի վրա փակցված

պաստառը: Դիմումը մերժվել է, քանի որ պաստառը փակցված էր Ընտրական օրենսգրքի կանոնակարգումներին համապատասխան:

Մինչև քվեարկության օրը՝ 20.06.2021թ., Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել են թվով 85 դիմումներ (բողոքներ), որոնցից կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացվել է թվով 13 դիմում, պատգամավորի թեկնածուների կողմից ինքնաբացարկի մասին թվով 17 դիմում, «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության կողմից՝ 2 դիմում պարզաբանում տալու վերաբերյալ, Ազգային ժողովի պատգամավորի կողմից՝ թվով 2 դիմում, քաղաքացիների կողմից՝ թվով 48 դիմում, թվով 2 դիմում ներկայացվել է նաև քաղաքացի Տիգրան Արզաքանցյանի կողմից, ում որպես պատգամավորի թեկնածուի գրանցումն անվավեր էր ճանաչվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ, մեկ դիմում հասարակական կազմակերպության կողմից դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով դիտորդներին հավատարմագրելու վերաբերյալ, որը մերժվել է Ընտրական օրենսգրքի պահանջները չբավարարելու հիմքով:

Պարզաբանում տալու վերաբերյալ 2 դիմումները բավարարվել են:

Քվեարկության օրվանից մինչև արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18.00-ն տարածքային ընտրական հանձնաժողովներում ստացվել է թվով 21 դիմում, որոնցից մեկը ներկայացվել է ընտրողի կողմից, մեկը՝ պատգամավորի թեկնածուի կողմից, թվով 19-ը՝ «Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպությունների կողմից:

Քվեարկության օրվանից մինչև արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18.00-ն, Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել է թվով 18 դիմում:

Ներկայացված բոլոր դիմումները Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-րդ, 48-րդ և 49-րդ հոդվածների պահանջներին համապատասխան քննարկվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից և կայացվել են համապատասխան որոշումներ: Դիմումների քննարկման օրվա և ժամի մասին դիմումատուները եղել են պատշաճ ծանուցված, իսկ դիմումների քննության արդյունքում կայացված որոշումները սահմանված կարգով ուղարկվել են դիմումատուներին և հրապարակվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում: Բոլոր այն դեպքերում, երբ դիմումատուները ներկայացել են իրենց դիմումների քննարկմանը, ապահովվել է վերջիններիս լսվելու իրավունքը:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն. «Օպերատիվ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ ընտրական հանձնաժողովները ձեռնարկում են համապատասխան միջոցներ: Նման դեպքերում առանձին ակտի տեսքով որոշումների ընդունումը պարտադիր չէ:»: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կարգադրությամբ Կենտրոնական

ընտրական հանձնաժողովում ստեղծվել է իրավիճակային վերլուծության կենտրոն, որտեղ գործել է նաև թեժ գիծ:

Քվեարկության օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովում գործող թեժ գծով, զանգվածային լրատվության միջոցներում և տարբեր էլեկտրոնային կայքերում տեղ գտած ընտրախախտումների վերաբերյալ տեղեկություններն օպերատիվ կարգով ուսումնասիրվել են իրավիճակային վերլուծության կենտրոնի կողմից, դրանցում ներկայացվող տեղեկությունների իսկությունը և փաստական հանգամանքները պարզվել են համապատասխան ընտրական հանձնաժողովների, պետական այլ մարմինների հետ և տեղեկությունների հաստատման պարագայում տրվել են համապատասխան ցուցումներ կամ հանձնարարություններ: Քվեարկության օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ու իրավիճակային վերլուծության կենտրոնն օպերատիվ կարգով արձագանքել են չորս տասնյակից ավելի կայքերում տեղ գտած ավելի քան 400 հաղորդումներին, ստուգվել են հրապարակվող հանգամանքները և տրվել մեկնաբանություններ: Մեկնաբանությունների ու պարզաբանումների վերաբերյալ տեղեկատվությունը հենց քվեարկության օրը զետեղվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021թ. հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների քվեարկության օրը ընդամենը երկու տարածքային ընտրական հանձնաժողովներում՝ սահմանված կարգով ներկայացվել են 2 դիմում՝ ընտրողի և պատգամավորի թեկնածուի կողմից: Ներկայացված դիմումները քննարկվել են սահմանված կարգով:

ժդ) Դատարան ներկայացված հայցադիմումները և դրանց քննությունը

2021 թվականի հունիսի 20-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան է ներկայացվել 27 հայցադիմում:

ժե) Ընտրությունների արդյունքների բողոքարկում

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն.

«Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ընտրությունների արդյունքներն ամփոփող ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել ընտրության արդյունքներն ամփոփելու համար սույն օրենսգրքով սահմանված համապատասխան ժամկետից առնվազն 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն: Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումների քննարկումը կատարվում է ընտրությունների արդյունքների ամփոփման շրջանակում, և դրանց վերաբերյալ առանձին որոշում չի կայացվում»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել է չորս դիմում Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին, որոնցից մեկը ներկայացվել է սահմանված ժամկետի խախտմամբ: Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետներում ներկայացված դիմումները ներկայացված են եղել «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության, Հայաստան և «Պատիվ ունեմ» դաշինքների կողմից:

Ներկայացված բոլոր դիմումները Ընտրական օրենսգրքի 47-րդ, 48-րդ և 49-րդ հոդվածների պահանջներին համապատասխան քննարկվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 27-ի նիստում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը լուծում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 102-րդ հոդվածի համաձայն. «Ազգային ժողովի ընտրությունների արդյունքով սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասով, 97-րդ հոդվածի 4-րդ մասով, 99-րդ հոդվածով ընդունված որոշումների վիճարկման մասին դիմումներ սահմանադրական դատարան կարող են ներկայացվել համապատասխան որոշման հրապարակման օրվանից հետո՝ 5-րդ օրը՝ մինչև ժամը 18.00-ն»:

Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրության արդյունքներով ընդունված թիվ 184-Ա որոշումը վիճարկվել է ՀՀ սահմանադրական դատարան ընտրություններին մասնակցող՝ Հայաստան դաշինքի, «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության, «Հայոց Հայրենիք» կուսակցության և «Պատիվ ունեմ» դաշինքի կողմից:

Դիմումների քննության արդյունքում Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2021 թվականի հուլիսի 17-ի ՍԴՈ-1606 որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 184-Ա որոշումը թողնվել է ուժի մեջ:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Տ. ՄՈՒԿՈՒՉՅԱՆ